

Digipass 270 սարքից օգտվելու կանոնները





ԻնտերնետԲանկ համակարգից օգտվող հաճախորդների համար բարձր մակարդակի անվտանգություն ապահովելու համար համակարգում կիրառված են VASCO Data Security ընկերության Digipass սարքերը: VASCO Data Security համաշխարհային առաջատարն է on-line համակարգերի համար իդենտիֆիկացիոն սարքեր արտադրող կազմակերպությունների մեջ:

Digipass 270 սարքը կարող է գններացնել երկու տեսակի կոդեր՝ համակարգ մուտք գործելու համար նախատեսված միանգամյա նշանաբաններ և փաստաթղթերը հաստատելու համար նախատեսված էլեկտրոնային ստորագրություններ:


Ինչպես օգտվել Digipass 270 սարքից

Ինչպես միացնել/անջատել սարքը

Digipass 270 սարքը միացնելու համար միաժամանակ պետք է սեղմել  կոճակները, իսկ անջատելու համար պետք է 2 անգամ սեղմել  կոճակը: Եթե սարքի հետ ոչ մի գործողություն չի կատարվում, ապա այն 30 վայրկյան հետո ավտոմատ անջատվում է:



Ինչպես դնել սկզբնական PIN կոդը

Digipass 270 սարքն առաջին անգամ միացնելուց օգտագործողը պարտադիր պետք է կազմի և մտապահի սեփական 5 նիշանի PIN կոդը:

Օգտագործողի գործողություն	Digipass սարքի հաղորդագրություն
Միացնել Digipass 270 սարքը 	NEW PIN
Հավաքել սեփական 5 նիշանի PIN կոդը	PIN CONF
Հաստատել նոր PIN-ը (կրկին հավաքել)	NEW PIN CONF APPLI _


Ինչպես փոխել գոյություն ունեցող PIN կոդը

Digipass 270 սարքի օգտագործման ընթացքում կարելի է փոխել գոյություն ունեցող PIN կոդը:

Օգտագործողի գործողություն	Digipass սարքի հաղորդագրություն
Միացնել Digipass 270 սարքը 	PIN
Հավաքել գոյություն ունեցող PIN կոդը և մի քանի վայրկյան սեղմած պահել  կոճակը	APPLI _ NEW PIN
Հավաքել նոր PIN կոդը	PIN CONF
Հաստատել նոր PIN-ը(կրկին հավաքել)	NEW PIN CONF


Ինչպես գեներացնել միանգամյա նշանաբան

Համակարգ մուտք գործելու համար օգտագործողը բացի իր անուն/նշանաբան գույզից պետք է համապատասխան դաշտում մուտքագրի նաև Digipass 270 սարքի գեներացրած թիվը՝ միանգամյա նշանաբանը:


Օգտագործողի գործողություն	Digipass սարքի հաղորդագրություն
Միացնել Digipass 270 սարքը 	PIN
Հավաքել PIN կոդը	APPLI _
Սեղմել 1 կոճակը	APPLI 1 գեներացվում է 6 նիշանի թիվ

Ինչպես գեներացնել էլեկտրոնային ստորագրություն

Համակարգում կամայական փաստաթուղթ մինչև բանկ ուղարկելը պետք է պարտադիր հաստատվի համապատասխան իրավասություններով օժտված օգտագործողի կողմից:

Օգտագործողի գործողություն	Digipass սարքի հաղորդագրություն
Միացնել Digipass 270 սարքը 	PIN
Հավաքել PIN կոդը	APPLI _
Սեղմել 2 կոճակը	APPLI 2
Մուտքագրել այն թիվը, որը համակարգը գեներացնում է ստորագրման ենթակա փաստաթղթի հիմնան վրա	12345678 գեներացվում է 8 նիշանի թիվ

Digipass սարքի վերադարձրած թիվը հանդիսանում է տվյալ փաստաթղթի էլեկտրոնային ստորագրությունը: Այդ թիվը անհրաժեշտ է մուտքագրել համապատասխան դաշտում և ստորագրել փաստաթուղթը:

 **Ոչ մի դեպքում չի թույլատրվում բացել սարքը կամ ենթարկել ֆիզիկական այլ ազդեցությունների:**

Հաճախ տրվող հարցեր

Ի՞նչ է PIN կոդը

PIN կոդն իրենից ներկայացնում է 5 թվանշաններից բաղկացած հավաքածու, որը պետք հայտնի լինի միայն այն օգտագործողին, ում պատկանում է տվյալ սարքը: Եթե PIN կոդը պատահաբար հայտնի է դառնում որևէ այլ անձի, ապա այն պետք է անհապաղ փոխել: Անվտանգության նկատառումներից ելնելով PIN կոդը պետք է կազմել հնարավորինս բարդ, այն պետք է հիշել (ոչ մի տեղ չգրանցել) և ոչ մի դեպքում չհայտնել այլ անձանց:



Ի՞նչ անել, եթե մուտքագրված է սխալ PIN կոդ

PIN կոդը սխալ հավաքելու դեպքում սարքի էկրանին հայտնվում է “FAIL N” հաղորդագրությունը, որտեղ N-ը կարող է լինել 1-5 թվերից մեկը և ցույց է տալիս սխալ փորձերի քանակը: Օրնակ՝ “FAIL 3” նշանակում է, որ 3 անգամ սխալ PIN է հավաքվել: PIN-ը **5** անգամ հաջորդաբար սխալ հավաքելու դեպքում սարքի էկրանին հայտնվում է “LOCK PIN” հաղորդագրությունը և սարքն արգելափակվում է: Արգելազերծման համար պետք է դիմել սպասարկող բանկին:

Ի՞նչ անել, եթե սարքի վերադարձրած կոդը չի ընդունվում համակարգի կողմից

Եթե սարքի վերադարձրած կոդը չի ընդունվում համակարգի կողմից, ապա հնարավոր է, որ այն երկար ժամանակ չօգտագործելու, մի քանի անգամ սխալ կոդ մուտքագրելու կամ այլ պատճառով արգելափակվել է բանկում: Արգելազերծման համար պետք է դիմել սպասարկող բանկին:

Ի՞նչ անել սարքը կորցնելու դեպքում

Սարքը կորցնելու դեպքում պետք է անհապաղ հայտնել այդ մասին բանկին: